ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԻՏԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՏ (XV—XIX ԴԴ.)

Պատմ. գիտ. դոկտոր. Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Զմյուռնահայ գաղթօջախը, ինչպես հայտնի է, իր ձևավորման ավարտին է հասել XIV դարում՝ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո։ Նախապես լինելով Արևելքի և Արևմուտքի տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն (XII—XIII դդ.), Զմյուռնիան հայ առևտրականների համար եղել է կարևորագույն հանգրվան։ Այստեղից նրանք իրենց առևտրական կապերն ու հարաբերություններն են իրականացրել Արևմուտքի և ամենից առաջ իտալական քաղաք-պետությունների հետ։ Էգեյան ծովով նրանք արտահանել են Հայաստանից և Փոքր Ասիայից ցամաքային ուղիներով իրենց տեղափոխած բեռները։ Իտալական քաղաքների հետ զմյուռնահայ վաճառականների սերտ հարաբերությունները հարատևեցին մինչև XVIII դարի կեսը և մասամբ շարունակվեցին հաջորդ հարյուրամյակի ընթացքում, այն բանից հետո, երբ ամայացան մետաքսի փոքրասիական ավանդական ուղիները և այնուհետև, Սուեզի ջրանցքի գործարկումով, թուլացան Զմյուռնիայի արտաքին առևտրական ամուր կապերը։

XII—XV դդ. իտալական առևտրականները ակտիվ գործունեություն էին ծավալել Սև և Էգեյան ծովերի նավահանգիստներում։ Ջենովացիներն ու վենետիկցիները ծովային ուղիներով իտալական ու եվրոպական այլ քաղաքներ էին տեղափոխում պարսկական մետաքս և թուրքական գյուղատնտեսական հումք՝ այս գործառնությունների մեջ սերտորեն համագործակցելով հայ առևտրականության հետ։ Ջենովան և Վենետիկը փոքրասիական առևտրին անմիջականորեն առնչվեցին Լատինական կայսրության հիմնադրման ժամանակից (1204 թ.)[1], երբ նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին օգտվելու քարավանային ուղիների ծայրակետերին գտնվող նավահանգիստներից։ Զմյուռնիա, Դենիզլի, Մանիսա, Այդրն և փոքրասիական այլ քաղաքներ ներթափանցեցին իտալացի առևտրականները՝ տեղական հումքի իրացման իրենց ընդարձակ հնարավորություններով։ Այս շրջանն էլ պետք է դիտել որպես հայ առևտրականության հետ նրա կապերի զարգացման որակապես նոր փուլ, որ հարատևելու էր մի քանի դար շարունակ։ Ջենովան արդեն XIII դարի վերջին և XIV-ի սկզբին իր թաղամասն էր հիմնել Զմյուռնիայում[2], որ վկայում է այս տարածաշրջանում նրանց առևտրատնտեսական հաստատուն դարձած կացության մասին։ Հիրավի, Զմյուռնիան Քիոսի և Միտիլենեի հետ XIII դարում ջենովացիների առևտրական կարևոր հանգուցակետերից մեկն էր և, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, «շատ զարգացած էր հայոց դիրքը դենուացոց պաշտպանության ներքև»[3]։ Այդպիսի հովանավորության մասին է վկայում հայ վաճառականների հիշատակումը 1261 թ. մարտի 13-ի՝ Միքայել Պալեոլոգ կայսեր և Ջենովայի առևտրականների միջև կնքված մի համաձայնագրում։ Այդ պայմանագրով Ջենովայի վաճառականները, ի հեճուկս մրցակից Վենետիկի, անմաքս առևտրի ազատություն

---

[1] В. А. Гордлевский. Избранные сочинения. Т. I, М., 1960, с. 45.

[2] История Византии, т. 3, М., 1967, с. 114.

[3] *Մ. Օրմանյան. Ազգապատում, մաս Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2076։*

էին ստանում բյուզանդական կայսրության փոքրասիական տիրություններում, բացի այդ նրանց տրվում էր Զմյուռնիայում առևտրական կայանների միջոցով ամրանալու հնարավորություն[4]։ Իտալական քաղաքների հետ հայ առևտրականության տնտեսական կապերի ուղղակի վկայություն է և այն, որ Հայաստանում XIII դարի վերջին բավական լայն շրջանառության մեջ էին իտալական ոսկե դուկատները[5]։

Զմյուռնիայում ջենովացիները ավելի ամրացրին իրենց դիրքերը XIV դարի երկրորդ քառորդին, երբ պապի ներշնչանքներով Հոոդոսի և Լոմբարդիայի ասպետները իրենց նավատորմիղով 1343 թ. գրավեցին Զմյուռնիան՝ վանելով Այդընօղլուներին և օսմանյան թուրքերին[6]։ Այս իրադարձությունների ժամանակ ասպետների միջավայրում եղել են հայեր[7], որ դարձյալ առնչվում է Ջենովայի և հայ առևտրականության ընդհանուր շահախնդրություններին։

Վենետիկից և Ջենովայից բացի, հայ առևտրականությունը դեռևս XIII դարում կապեր էր հաստատել իտալական այլ քաղաքների հետ։ Դրանցից էր Անկոնան՝ ամենահին ասպնջական քաղաքը հայերի համար։ 1248 թ. հայերն այստեղ հաստատել են հոգետուն, իսկ XIV դարում արդեն մեծ թիվ էին կազմում, ինչպես Վենետիկում և Ջենովայում[8]։ Մինչև XVIII դարը հայերը Անկոնա են բերել մետաքս, բուրդ, համեմունքներ։ 1624 թ. Ապրոյան տոհմից Հակոբը վաճառքի համար պղպեղ է ուղարկել Անկոնա[9]։ Հետագայում Անկոնայի հայության մի մասը լուծվել է իտալացի բնակչության մեջ, որը հայրենիքի հետ կապերը կորցնելու հետևանքն էր։

Իտալական քաղաքներում հայ առևտրականության տարածվելը կապվում է իտալական քաղաքների տնտեսության մեջ հայերի նոր կապերի, հայ առևտրական կապիտալի գործողության շառավիղների ընդլայնման հետ։ Զմյուռնացի վաճառականները այս՝ անմիջականորեն ապրանքների արտահանման և տեղում իրացնելու սահմանադիծն անցան XV—XVI դդ.։ Դրան նպաստեցին Վենետիկի հանրապետության տեղական արտադրության զարգացման նոր միտումները, որոնք ամենից առաջ խթանվում էին հումքի պահանջարկի ընդլայնումով։ Այդ պահանջարկի թելադրանքով Վենետիկի հանրապետությունը բարենպաստ պայմաններ էր ստեղծում լեվանտական առևտրին փոքրասիական հումք մատակարարող հայ առևտրականության համար։ 1576 և 1579 թթ. Վենետիկի սենատը զեղչեց ցամաքով բերված պարսկական մետաքսի մաքսը։ Մաքսերը նվազեցին նաև անգորական բրդի ներմուծման դեպքում՝ 1567 և 1661 թթ.։ 1623 թ. Զմյուռնիայով պարսկական մետաքսի ներմուծման համար սահմանված մաքսը «չորրորդ մասն էր հարկին զորս այլոց պահանջէին»[10]։

Վենետիկի հետ փոքրասիական վաղեմի առևտուրը XIII—XIV դդ. հաջողությամբ շարունակում էին բելությունները, որին իրենց մասնակցությունն էին բերում հայ վաճառականները։ Սարուխանի, Այդընի և Մենթեշեի այդ իշխանությունները էգեյան ծովով իրականացնում էին առևտուրը Վենետիկի, Ֆլորենցիայի և այլ քաղաքների հետ[11], իսկ այդ առևտրական ուղի-

---

4 Б. Т. Горюнов. Позднебизантийский феодализм. М., 1962, с. 93—94.

5 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. 3, Երևան, 1952, էջ 265։

6 Ա. Ալպոյաճյան. Անհետացող հայ գաղութներ.—«Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1923, № 5, էջ 135։

7 Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, Վենետիկ, 1966, էջ 358։

8 Նույն տեղում։

9 Գ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 452—453։

10 Նույն տեղում, էջ 449։

11 J. H. Uzunçarsılı. Anadolu beylikleri. Ankara, 1937, s, 112.

ները լավ ծանոթ էին հայ վաճառականներին։ Հաջորդ դարերում այդ իրազեկության վրա հենվելով՝ հայերը Վենետիկի հանրապետության մեջ ստեղծեցին իրենց առևտրական կայանը։ XVI դարում, ինչպես նշում է Ալիշանը, «յորչափ յաճախութիւն կար հայոց ի Վենետիկ և ոչ միայն ի Զուղայէ կամ ի պարսկահայոց, այլև իբր ի թուրքահայոց, մանաւանդ ի Փոքր Ասիոյ...»[12]։ Վերջիններիս մեջ առանձնապես ակտիվ էին զմյուռնահայերը։ XVII—XVIII դդ. Վենետիկում արդեն գործում էին զմյուռնահայ վաճառականների սերունդները, որոնք այստեղ ապրող հարյուրից ավելի հայ ընտանիքների ներկայացուցիչներից էին[13]։

XV դարի երկրորդ քառորդին Վենետիկի ձեռնարկած՝ տարանցիկ առևտուրը խրախուսող միջոցառումները բարենպաստ պայմաններ էին ստեղծվում նաև եվրոպական այլ շրջանների հետ կապված հայ վաճառականների, այդ թվում և զմյուռնահայերի համար։ Այս քաղաքականության հետ զգայիորեն կապվում է հայ-հոլանդական առևտրական կապերի աշխուժացումը XVI դարի սկզբներից։ Իր առևտրատնտեսական քաղաքականությամբ Վենետիկը նպաստում էր հոլանդական առևտրական նավատորմի միջոցով Հոլանդիայի հետ իր տնտեսական համագործակցության զարգացմանը։ Այստեղ ևս որոշակի դեր էր վերապահվում հայերին՝ իբրև փոքրասիական հումքի գլխավոր արտահանողների։ Հոլանդական նավերով զմյուռնահայ վաճառականները Վենետիկ են փոխադրել մետաքս և մետաքսից պատրաստված ապրանքներ, բուրդ, համեմունքներ, իսկ այստեղից, հակառակ ուղղությամբ՝ դամասկյան կերպաս, հայելի, ապակեղեն և այլն։

Վենետիկի հայ վաճառականների մեջ զգալի թիվ են կազմել մեղրեցի կամ սյունեցի հայերը։ 1718 թ. Վենետիկում բնակվում էին տասը մեղրեցի վաճառականներ, որոնք առևտրական կապեր ունեին Զմյուռնիայի հետ[14]։ Անշուշտ, միակողմանի կլիներ հայ վաճառականության՝ Զմյուռնիայի և Վենետիկի միջև եղած գործառնությունների շրջանակը սահմանափակել զուտ Սյունիքի հայ առևտրականներով։ Եվրոպական քաղաքներում, մանավանդ իտալական քաղաքներում հայ վաճառականների նստակեցության երևույթը ընդհանրական էր առհասարակ հայ առևտրականության համար։ Ա. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նկատում է, որ դեռևս XVII դարի 60—70-ական թթ. արևմտահայ առևտրականների հետքերով արևելահայ խոջաները ևս հաստատվում էին Եվրոպայում՝ Վենետիկում, Լիվոռնոյում, Մարսելում, Ամստերդամում և այլուր[15]։ Նույն կերպ, առևտրական փոխադարձ կապերի տրամաբանությամբ նրանք հաստատվում էին Զմյուռնիայում՝ իրենց հայրենակիցների շնորհիվ ավելի ամուր կապեր ստեղծելով իտալական վաճառական քաղաքների հետ։

XVII դարի առաջին քառորդին Վենետիկում հայ վաճառականների հաստատմանը նպաստող ազդակներից էր նաև Վենետիկի և Հոլանդիայի առևտրական հարաբերությունների հետագա խորացումը։ Իրենց առևտրական նավատորմիղի շահախնդրություններից ելնելով և մրցակիցներին կաշկանդելու նպատակով 1620-ական թթ. հոլանդական գլխավոր շտաները օրենք էին ընդունել՝ արգելել օտար նավերով Թուրքիայից ու Պարսկաստանից ապրանքների տեղափոխումը Հոլանդիա[16]։ Դրանով իսկ Լևանտում հաստատվում էր հոլանդական առևտրական նավատորմի առանձնաշնորհյալ կարգավիճակ, քանի որ հոլանդական շուկան փակվում էր այն վաճառականների

12 Ղ. Ալիշան. Հայ-Վենետ. Վենետիկ, 1896, էջ 383։

13 Նույն տեղում, էջ 500—502։

14 Ս. վարդ. Արամյան. Դավիթ բեկ կամ պատմություն զոփանցվոց. Վենետիկ, 1978, էջ 113—114։ Ալիշան. Սիսական, էջ 302։

15 Ա. Գ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք 2, Երևան, 1959, էջ 216։

16 Ա. Սարուխան. Հոլանդիան և հայերը. Վիեննա, 1926, էջ 15։

համար, որոնք երթևեկում էին ոչ հոլանդական նավերով։ Մասնավորապես Զմյուռնիան, որպես արտահանման հանգուցակետ, և զմյուռնացի հայ առևտրականությունը ընկնում էին խիստ աննպաստ դրության մեջ՝ ենթակա դառնալով հոլանդական առևտրական նավատորմի մենաշնորհին։ Այս պայմաններում Հոլանդիայի հետ առևտուր անող զմյուռնահայ վաճառականներին մնում էր կամ հաստատվել հոլանդական քաղաքներում և կամ էլ Վենետիկում և իտալական այլ քաղաքներում՝ իրենց գործառնությունները շարունակելու համար։ Վենետիկի և Ամստերդամի հայ գաղթօջախների ստվարացումը XVII դարում առհասարակ պետք է դիտել որպես Լեվանտում տերությունների տնտեսական քաղաքականության՝ առևտրի լիբերալացումը սահմանափակելու, ինչպես և նրանց մրցակցության անմիջական հետևանք։

Իտալական քաղաքներից զմյուռնահայ վաճառականները Թուրքիա էին ներմուծում եվրոպական արդյունաբերական արտադրանք՝ գործվածքեղեն, ապակեղեն, կոշիկ, արդուզարդի առարկաներ, կղմինդր, հացաբլիթեղեն և այլ ապրանքներ[17]։ Ընդլայնելով իրենց դերը նաև ներմուծման ոլորտում՝ զմյուռնահայ վաճառականությունը, մասնավորապես XVII—XVIII դդ., ազդեցիկ տեղ էր ապահովել իր համար միջնորդ առևտրի մեջ։ Սակայն Օսմանյան Թուրքիայի և Վենետիկի հանրապետության ռազմաքաղաքական ներհակությունները, ինչպես և պարսկական մետաքսի արտահանության անկումը XVIII դարի առաջին կեսին, պետք է սահմանափակեին հայ առևտրականների կապերը իտալական քաղաքների հետ։ Դեռևս XVII դարի սկզբին անգլիական Լեվանտի ընկերությունը պատկառելի ուժ էր դարձել օսմանյան արտաքին առևտրի հաշվեկշռում, որ պարզապես վկայում էր արևմտյան ծովային ուղիների աճող գերի մասին[18]։ Վենետիկի միջերկրածովյան հզորությունը արդեն կորցնում էր իր երբեմնի ուժը։ Սակայն թուրքական տնայնագործական արտադրանքը ի վիճակի չէր բավարարելու տեղական պահանջմունքները և դիմակայելու իտալական արդյունաբերական արտադրանքին։ Մյուս կողմից, Օսմանյան Թուրքիան շարունակում էր պահպանել էժան հումքի խոշոր մատակարարի դերը իտալական արդյունաբերության համար։ Օսմանյան կառավարողները վիթխարի շահույթներ էին ստանում հումքի արտահանումից և պատրաստի արտադրանքի ներմուծումից, ուստի և շարունակում էին խրախուսել արտաքին առևտուրը՝ անշուշտ, որոշակի փոփոխություններ մտցնելով արտաքին առևտրական քաղաքականության մեջ։ Վենետիկի հետ առևտուրը զգալի չափեր ուներ մինչև 1740-ական թթ., մասնավորապես մետաքսի, ոսկեկար բանվածքի և բրդի արտահանման բնագավառում[19], որ շարունակվեց նաև դրանից հետո։ Պարսկական մետաքսի առևտրի անկումը լուրջ հարված պետք է հասցներ այդ առևտրի չափերին ու հեռանկարներին։ Հոլանդական առևտրական նավատորմիղին փոխարինելու էր գալիս անգլիականը, որը տնօրինում էր Զմյուռնիայից Վենետիկ տանող ջրային ուղիները։ Անգլիական և ֆրանսիական զորեղացող առևտրական կապիտալին դիմակայելու նպատակով Վենետիկի սենատը այս ժամանակաշրջանում բավական լայնախոհություն էր հանդես բերում հայ առևտրականների հետ վաղեմի կապերը պահպանելու գործում։ Մի հայտնի չափով այդպիսի քաղաքականությունը թելադրվում էր Վենետիկի հանրապետության և Օսմանյան Թուրքիայի քաղաքական հարաբերությունների լարվածությամբ, որը բացասաբար էր անդրադարձել Լեվանտի առևտրի վրա։ 1694 թ., Ահմեդ II-ի ժամանակ, Վենետիկի հանրապետության նավատորմիղը պատրաստ էր ռազմական գործողություններ սկսել Զմյուռնիայի դեմ, սակայն եվրոպական

---

[17] M. Akdag. Turkiyenin iktisadi ve içtimai tarihi. Cilt 2, Istanbul, 1974, s. 436.

[18] Lahib Subhi. The Era of Süleyman Magnificent. — International Journal of Middle East Studies, Cambridge Univ. press, vol. 10, 1979, № 4, p 450.

[19] M. L. Shay. The Ottoman Empire from 1720 to 1734. Urbana, 1944, p. 63.

մյուս տերությունների միջամտությունից հետո հարկադրված էր հեռանալ Էգեյանի մատույցներից[20]։

Իտալական քաղաքների հետ զմյուռնահայ վաճառականության կապերի մասին եզրակացությունների հանգելու համար կարևոր նշանակություն է ստանում Տոսկանայի դքսության կենտրոն Լիվոռնոյի հետ հայերի առանձնահատուկ հարաբերությունների բացահայտումը։ Լիվոռնոյում հայ առևտրական գաղութ էր ստեղծվել դեռևս XVI—XVII դդ., մի քաղաք, որի հետ զմյուռնահայ առևտրականության կապերը պահպանվեցին բավականաչափ երկար՝ մինչև XIX դ. առաջին կեսը։ Արդեն XVI դարում Լիվոռնոն դարձել էր ճանաչված հանգուցակետ տարանցիկ առևտրում՝ կարևոր տեղ ձեռք բերելով Արևելքի և արևմտաեվրոպական երկրների ապրանքաշրջանառության մեջ։ 1578—1605 թթ. Լիվոռնո ժամանած անգլիական ու հոլանդական նավերի թիվը մեծացել էր հինգ անգամ[21]։ 1591 թ. Տոսկանայի դուքսը իր հրովարտակով արտոնություններ էր շնորհում հայերին՝ բնակվելու Լիվոռնոյում։ Ի թիվս մյուսների, դրանից օգտվեցին զմյուռնահայերը։ Հավանաբար, դրանից հետո է առաջացել Լիվոռնոյի առևտրական հայ գաղութը, որը գոյություն ուներ մինչև XVIII դարի վերջերը։

XVII դարում Լիվոռնոյի հետ աշխույժ առևտուր էին անում և այնտեղ բնակություն հաստատում ագուլեցի, ջուղայեցի և դափանցի հայ վաճառականները ևս։ Հաջորդ դարի վերջին Զմյուռնիայից Լիվոռնո էր անցել մեծահարուստ հայ վաճառական Անտոն Զելեպին, որը, փրկվելով սուլթանի ոտընձգություններից, այնտեղ էր տեղափոխել յոթ միլիոն լիրա[22]։ Հայ ստվարացած համայնքի հոգևոր պահանջմունքներից ելնելով, Լիվոռնոյում բնակվող մի ուրիշ մեծահարուստ՝ Ապրո Զելեպին, 1663 թ. դիմել էր Ֆլորենցիայի պապական նվիրակին, խնդրելով միջնորդել Հռոմի առջև՝ եկեղեցի կառուցելու համար[23]։ Ինչպես միշտ, Հռոմն առարկություններ ուներ ոչ կաթոլիկ եկեղեցիների հարցում, ուստի դավանական տարաձայնությունները հաղթահարվեցին բավական ուշ. այս պատճառով եկեղեցու շինարարությունը ավարտվեց միայն 1714 թ., այն օծվեց Պիզայի արքեպիսկոպոսի հրամանով[24]։

XVII—XVIII դդ. Լիվոռնոյում, ինչպես և իտալական մյուս քաղաքներում հայերը վաճառել են մետաքս, բամբակ, բուրդ, կտավեղեն, կերպաս, սաթ, գյուղատնտեսական այլ ապրանքներ։ Թուրնֆորը տեղեկացնում է, որ Զմյուռնիայի հայ վաճառականները Լիվոռնո էին արտահանում մետաքս, բամբակ, ոչխարի բրդի թել, մեղրամոմ[25]։

Օտար, այդ թվում և հայ վաճառականներին 1593 թ. առևտրական առանձնաշնորհումներ էր տվել նաև Ֆլորենցիայի մեծ դուքս Ֆերդինանդ Մեդիչին։ Ի թիվս այլ արտոնությունների, նրանց տրվում էր դավանական ազատություն, ինչպես և առանձին համայնք կազմելու իրավունք։ Ֆլորենցիայի, ինչպես և Տոսկանայի իշխանությունների ընձեռած արտոնությունների մեջ ուշադրավ է հենց այս՝ առանձին համայնք կազմելու իրավունքը[26]։ Ակներև է, որ դրանով հիշյալ վաճառականների գործունեությունը իշխանությունների կողմից դիտվում էր որպես առևտրի մշտական ու հուսալի կապերի երաշխիք, որ պետք է նպաստավոր լիներ իտալական առևտրականների համար՝ լեվան-

---

20 Ս. Էփրիկյան. Պատկերազարդ ընդհանրական բառարան. գրքակ 1, Վենետիկ, 1900, էջ 752։

21 В. И. Рутенбург. Италия и Европа накануне нового времени. Л., 1974, с. 33.

22 Լ ե ո. Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973. էջ 57։

23 Մ. Ուղուրլյան. Պատմություն հայոց գաղթականության և շինության եկեղեցվո նոցին ի Լիվոռնո քաղաքի. Վենետիկ, 1891, էջ 51—52։

24 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 452։

25 J. P. Tournefort. Voyage d'un botaniste. II, Paris, 1982, p. 328.

26 Մ. Ուղուրլյան. նշվ. աշխ., էջ 253—255։

տի առևտրական ասպարեզում։ Ֆլորենտական հրովարտակը այս տեսակետից հետաքրքիր է նրանով, որ երաշխավորում է ոչ միայն առևտրական, այլև քաղաքացիական, կրոնական և իրավական որոշակի ազատություններ։ Ակներև է, որ հրովարտակը հետամտում էր ներմուծվող ապրանքների առևտրի ընդլայնումը։

XVII դարի վերջին Վենետիկը, Լիվոռնոն և իտալական մյուս քաղաքները զմյուռնացի վաճառականների համար դառնում են ոչ միայն առևտրական ուղու վերջնակետ, որտեղ իրացնում էին ներմուծած ապրանքները, այլև տարանցիկ կետեր՝ Արևմտյան Եվրոպա դուրս գալու համար։ 1684 թ. անգորական բուրդը Զմյուռնիայից տեղափոխվել է Վենետիկ և այստեղից ցամաքային ճանապարհներով՝ Ամստերդամ և Հոլանդիայի մյուս քաղաքները։ Այս ժամանակաշրջանում Վենետիկի իշխանությունները, ելնելով տեղական արտադրությունը հումքով ապահովելու պահանջներից, փորձել են խոչընդոտել ներմուծված ապրանքները դուրս տանելուն, ուստի և իրենց մաքսային քաղաքականության մեջ դիմել են որոշ սահմանափակող ձեռնարկների։ 1657 և 1661 թթ. բրդի յուրաքանչյուր ներմուծված հակից այնքան մաքս է սահմանվել, որքան Վենետիկից արտահանելու համար (6-ական դուկատ)։ Զմյուռնացի վաճառականները բողոքել են, ցույց տալով, որ այդպիսի մաքսային սահմանափակումը անիմաստ է դարձնում առևտուրը Վենետիկի վրայով, քանի որ Զմյուռնիայից Վենետիկ նավով բերված և այստեղից արտահանված մեկ հակ բուրդը նստում է 70 դուկատ, մինչդեռ Զմյուռնիայից Լիվոռնո բերելով և արտահանելու դեպքում՝ 62 դուկատ[27]։ Անկախ այն բանից, որ Վենետիկի իշխանությունները անսացին հայ վաճառականների բողոքին և թեթևացրին մաքսի չափը, ակնառու էր, որ առավել ձեռնտու են հարաբերությունները առևտրական դյուրություններ ընծայող Լիվոռնոյի հետ։ Հենց այս հանգամանքով են բացատրվում զմյուռնացի վաճառականների բավականաչափ երկարատև առնչությունները և առևտրական կայանի հարատևումը Լիվոռնոյում։ 1693 թ. Զմյուռնիայից Վենետիկ է բերվել 1192 հակ բուրդ, իսկ Լիվոռնո՝ 2900 հակ[28]։

Լիվոռնոյում հաստատված հայ վաճառականները ակտիվ մասնակցություն են ունեցել իտալական քաղաքների միջև ծավալված առևտրին, ինչպես նաև դրանց առօրեական ու հոգևոր կյանքին։ 1646 թ. Լիվոռնոյից Լուկկա քաղաք՝ տոնախմբության են գնում 13 հայ վաճառականներ, որոնցից 3-ը զմյուռնացիներ էին. նրանք պետք է մասնակցեին ս. Տավինոյի տոնախմբությանը[29]։ Լուկկան հայ վաճառականությանը քաջածանոթ իտալական քաղաքներից էր։ Դեռևս XV դարում պարսկական մետաքսի քարավանային ուղիներից մեկը անցնում էր Բուրսայով, այնուհետև էգեյան կամ Մարմարա ծովերով ձգվում Վենետիկ և Լուկկա՝ այստեղից էլ ուղղվում դեպի եվրոպական արդյունաբերական այլ կենտրոններ։ Հայերը պետք է որ վաղեմի կապեր ունենային այստեղ, որովհետև տոնախմբության ժամանակ պնդում էին, որ իրենք ազգակցական կապեր ունեն Հիշյալ սրբի հետ։

Ուշագրավ են Զաքարիա Ագուլեցու հայտնած տեղեկությունները իտալական քաղաքների հետ Զմյուռնիայի առևտրատնտեսական կապերի վերաբերյալ։ Զաքարիան ճանապարհորդել է 1647-ից սկսած տասնյակ տարիներ՝ Ագուլիսից հասնելով Զմյուռնիա։ Նրա երթուղին, այնուհետև, քանիցս ձգվել է դեպի Վենետիկ, այստեղից՝ Ամստերդամ և Տրիեստ։ Զաքարիան հատուկ տեղ է տալիս Զմյուռնիա—Լիվոռնո երթուղու նկարագրությանը[30]։ Նրա երթուղին բանուկ առևտրական ճանապարհներն էին՝ Պարսկաստան, ապա Թուրքիա, Էրզրում—Թոքատ—Իզմիր գծով։ Զաքարիայի անցած ուղիները բա-

27 Ալիշան. Սիսական, էջ 44։

28 Նույն տեղում, էջ 445։

29 Նույն տեղում, էջ 451։

30 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 15—16։

վականաչափ հստակ պատկերացում են տալիս պարսկական մետաքսի ցամաքային ճանապարհի, և ապա դրա արտածման եվրոպական խաչուղիների մասին, որ կարևոր է միջնադարում հայ-իտալական առևտրական հարաբերությունների ուսումնասիրության տեսակետից։

Իտալական քաղաքների հետ Զմյուռնիայի և զմյուռնահայ վաճառականության ավելի ուշ շրջանի փոխհարաբերությունները պետք է կենտրոնանային բամբակի արտահանման և ներմուծման գործառնությունների վրա։ XVII դարի վերջին և XVIII-ի սկզբից էգեյանի շրջանում բամբակի մշակության աճը (Թիրե, Բերգամա, Դենիզլի և այլուր) խթանում էին ոչ միայն բամբակագործական մանուֆակտուրայի զարգացումը, այլև հումքի արտահանման հնարավորությունները։ Զմյուռնահայ վաճառականությունը գործուն դեր է ունեցել բամբակի արտահանման բնագավառում։ XVIII դարի երկրորդ կեսին Զմյուռնիայից իտալական քաղաքներ և արևմտաևրոպական այլ շրջաններ արտահանվող բամբակի քանակի մասին բավական տեղեկություններ է տալիս Ղ. Ինճիճյանը, ըստ որի, այստեղից տարեկան արտահանվում էր 45 հազար պալեա (բեռ) բամբակ և 25 հազար պալեա բամբակի մանած։ «Սա բեռները,—գրում է նա,—քովի դեղերեն Իզմիր բերելու, Իզմիրեն ալ ծովեզերքը տանելու միայն ճամբու խարճ՝ 1776 տարին, որ մենք Իզմիր գտնվեցանք, շաբաթ կըլլար, որ 300—500 քեսե կխարճեին վաճառականները, բայց այդչափ բամպկին դեմ Ֆրենկիստան իր ձեռագործները բերելեն զատ՝ նավերով նաղտ ստակ ալ կխրկեր վճարելու համար»[31]։ Այս տեղեկության մեջ ուշագրավ է նաև XVIII դարում Լեվանտում եվրոպական առևտրական հաշվեկշռի արդեն պարզ ընդգծվող ակտիվությունը, համեմատած նախորդ ժամանակաշրջանների հետ, երբ արևելյան ապրանքային անսպառ հոսքը պայմանավորում էր եվրոպական, այդ թվում և իտալական առևտրի պասսիվ հաշվեկշիռը[32]։ Դա նշանակում էր նաև, որ Վենետիկը և իտալական այլ քաղաքները արդեն ստեղծել էին զարգացած թեթև արդյունաբերություն, որի արտադրանքի իրացումը այլևս չէր ենթադրում միջնորդ առևտրի այնպիսի սուր կարիք, որ զգացվում էր XIV—XVII դդ.։ Արդյունաբերության զարգացումը սահմանափակում էր միջնորդ առևտրի ինքնուրույնությունն ու ծավալները և դրանք հարմարեցնում իր պահանջմունքների մակարդակին։ Հիմնականում սրանով էր պայմանավորված արևմտահայ, այլև զմյուռնահայ միջնորդ առևտրի դերի նվազումը իտալական քաղաքների հետ ունեցած տնտեսական հարաբերություններում[33]։

Այսուհանդերձ, նոր ժամանակներում արտադրության զարգացման հետ կապվող արտադրանքի իրացման խնդիրները և հումքի շարունակական պահանջմունքը իտալական քաղաքներին մղում էին Թուրքիայի հետ առևտրական սերտ կապերի։ Միջերկրածովյան շրջանում դրան էր մղում նաև անգիջում մրցակցությունը անգլիական ու ֆրանսիական կապիտալների և քաղաքականության հետ, որոնք XVIII դարում դարձել էին առավել նպատակասլաց։ 1740-ական թթ. Զմյուռնիայում նվազել էր վենետիկցի վաճառականների թիվը, սակայն հենց նույն ժամանակներում ռուսական ռեզիդենտ Ա. Ի. Նեպլյուևը տեղեկացնում էր, որ Զմյուռնիայում սկսել է գործել նոր

---

31 Ղ. Ինճիճյան. Դարապատում, 1750—1757. Վենետիկ, 1824, էջ 232։

32 В. И. Рутенбург. Указ. соч., с. 46.

33 Միջնորդ առևտուրը, որ անուցել էր եվրոպական արտադրության վիթխարի պահանջները, XVIII դարում արդեն ցուցադրել էր իր հնարավորությունների սպառումը։ Մյուս կողմից, այն բավական կարևոր նշանակություն ունեցավ թուրքական ավանդական հասարակության մեջ տնտեսական ու հասարակական փոփոխությունների համար։ Միջնորդ առևտրի բերած եկամուտները հսկայական չափերն էին, որ հղորացրեցին այանների ինստիտուտը։ Այսպես, Զմյուռնիայի փաշա Կարաօսմանօղլուն այնքան էր հղորացել, որ հանդգնել էր գորք չտրամադրել Ռուսաստանի հետ 1768 թ. պատերազմի մեջ մտած սուլթանին (Д. Новичев. История Турции, I, Л., 1963, с. 221).

հաստատված նեապոլիտանական հյուպատոսարանը[34]։ Իտալական առևտրի սահմանափակման միտումները դրդում էին ակտիվացնել դիվանագիտական հարաբերությունները։ Հիրավի, նշված ժամանակաշրջանում նվազել էր իտալական առևտրի չափը Թուրքիայում, որ դարձյալ սահմանափակում էր զմյուռնահայ վաճառականության գործառնության շրջանակները։ Նվազել էր Ֆլորենտական կերպասի և ջենովական թավշի ներմուծումը, որչափով բավականաչափ աշխուժացում էր ապրել Կ. Պոլսի, Քիոսի և այլ վայրերի մետաքսե էժան գործվածքների վաղեմի արտադրությունը, որի արդյունքներն իրենց մատչելիության շնորհիվ բավարարում էին զանգվածային գնորդի պահանջարկը։ Զմյուռնահայ դաղթօջախի պատմությամբ զբաղվող Թ. Ճերմակյանը անդրադառնալով նշված փոփոխություններին, հիշատակում է և Էգեյանի մերձափնյա տարածքների արտադրանքը. «Չքավորը,— գրում է նա,— կգոհանար տեղական բամպակ կտավներով, որոնց այժմ Մենեմենի պեզ կամ բամպակ պեզի անունը կտրվի»[35]։

Միաժամանակ, Վենետիկը զգալիորեն պահպանում էր իր առևտրական ներկայությունը Թուրքիայում։ Թուրքական էլիտար շրջաններում բավական բարձր էին գնահատվում նրա արտահանած նուրբ գործվածքները (որով, ի դեպ, հռչակված էր նաև Ֆլորենցիան), ոսկեկար դիպակը[36] և նրբարվեստ ապակեղենը։ Զմյուռնահայ առևտրականները մեծ չափերով ընդգրկված էին այդ առևտրի մեջ, որի հորիզոններր հասան մինչև XIX դարի կեսը։ Իտալական քաղաքներում զմյուռնահայ վաճառականները գործել և վաճառատներ են ունեցել այս վաղեմի կապերի շնորհիվ։ Այսպես, Նեապոլի հետ առևտրական հին հարաբերություններն էր շարունակում Ապրոյանների նշանավոր տոհմը, որի ներկայացուցիչներից Ստեփանը 1852 թ. գործել և վախճանվել է այդ քաղաքում[37]։

Հայ առևտրականները հարատևում էին նաև Լիվոռնոյում։ 1843 թ. Լիվոռնոյի հայկական եկեղեցին նորոգելու կապակցությամբ հիշվում է Պողոս Անդրեասյան զմյուռնացին, որը, իբրև տեղի բնակիչ, լավատեղյակ էր կալվածական (սեփականատիրական) տուրքերի հարցերում[38]։ Մինչև XIX դարի վերջը և հետո զմյուռնահայերը իտալական քաղաքներ էին արտահանում Էգեյանի շրջանի բամբակագործական և այգեգործական բազմազան արդյունքներ, չոր միրգ և այլն։ Ուշագրավ է, որ Զմյուռնիայի և նրա շրջակայքի սահմաններում արտադրված խաղողի շիրայի ներմուծման չափերով դարավերջին Իտալիան գրավում էր առաջին տեղը (2157447 կգ)՝ ավելի շատ, քան Ֆրանսիան (1511285 կգ), Ավստրիան (781498 կգ) և Գերմանիան (552744 կգ)[39]։

Հարկ է նկատել, որ զմյուռնահայ վաճառականության գործունեությունը իտալական քաղաքների հետ ունեցած միջազգային առևտրում հարատևել է ազգային առևտրի ավանդույթների, տոհմային ընդունակությունների և միջավայրն ու իրավիճակը լայնորեն ընկալելու իր հնարավորությունների շնորհիվ։ Իր հերթին, իտալական քաղաքների առևտրական վաղնջական կուլտուրան քաղաքակրթում էր զմյուռնահայ վաճառականությանը, օգնում նրան՝ յուրացնելու եվրոպական առևտրի նուրբ, կատարելագործված մեթոդներն ու փորձը, որոնք այնքան անհրաժեշտ էին առհասարակ միջազգային առևտրում կենսունակություն և կայունություն ձեռք բերելու համար։ Հայ վաճառականներին իտալական քաղաքների տրամադրած առևտրի բարենպաստ պայ-

---

34 Б. М. Данциг. Русские путешественники на Ближнем Востоке. М., 1965, с. 80.

35 «Արշալույս», Զմյուռնիա, 1908, 1 մայիսի։

36 Նույն տեղում։

37 «Նոյյան աղավնի», Կ. Պոլիս, 1852, 9 մայիսի։

38 Մ. Ուղուրլյան. Նշվ. աշխ., էջ 155։

39 «Սուրհանդակ», Կ. Պոլիս, 1900, 7 հուլիսի։

մանները շատ դեպքերում վճռական նշանակություն էին ունենում այն խըտրական քաղաքականությանը դիմակայելու համար, որ Թուրքիայում կիրառվում էր հայ (նաև՝ այլ ոչ մահմեդական) վաճառականության նկատմամբ։ Այսպես, հայտնի է, որ Բ. Դուռը մինչև թանզիմաթը թուրքահպատակ վաճառականներին շնորհել էր որոշ արտոնություններ (իմթիյազ), որոնք բաժանվում էին մի քանի կարգի։ Թուրք առևտրականը արտասահման մեկնող նավի համար մաքս էր վճարում 380 ղուրուշ, հայերը և մյուս ազգությունները՝ 500 ղուրուշ (և 600 ղուրուշ բոլոր նրանք, ովքեր իմթիյազ չունեին)[40]։ Առևտրի նկատմամբ օսմանյան համբավված «ներողամտությունը», որի մասին առասպելներ են պատմում թուրքական պատմաբանները գրեթե միաբերան, իր հակադրությանն էր վերածվում օտար նավերի համար Զմյուռնիայում կայուն մաքսի չգոյության պատճառով։ Կայուն մաքսի բացակայությունը կապուտան-փաշային և սուլթանական մյուս պաշտոնյաներին տալիս էր ապօրինի գանձումների, կամայականության և կաշառք շորթելու հավելյալ հնարավորություններ։

Իտալական քաղաքների հետ հայ վաճառականության առևտրական կապերն ու հարաբերությունները խոր կնիք դրեցին հայ մշակույթի զարգացման վրա։ Հայ գրատպության սկիզբը, որ իսկական հեղաշրջում եղավ հայ մշակույթի համար, ինչպես հայտնի է, դրվեց Վենետիկում՝ 1512 թ.։ Հոսում են գործել, հավանաբար ոչ միայն դավանական, այլև մշակութային առնչություններով, զմյուռնահայ հոգևոր առաջնորդներ Պոնկտոշ Կարապետը (1614—1615), Սիմեոն վարդապետը (առաջնորդ՝ 1718 թ.)։ Վենետիկի հետ դավանական առնչություններ է ունեցել զմյուռնացիների մի այլ հոգևոր առաջնորդ՝ Մինաս արք. Ակնցին (1736 թ.), որը վախճանվել է 1757 թ.՝ Վենետիկում, ինչպես և Սարգիս արք. Սարաֆյանը, որը իբրև հայ կաթոլիկական գործիչ, Զմյուռնիայից անցել է Վենետիկ[41]։

Զմյուռնահայ համայնքում բարձր էր գնահատվում լեզուների, մանավանդ իտալերենի իմացությունը։ Իտալերենին լավատեղյակ էր և այդ լեզվից հայերեն թարգմանություններ էր անում զմյուռնահայերի առաջնորդ Պ. Թազթազյանը (1840-ական և 1860-ական թթ.), հետագայում՝ Կ. Պոլսի պատրիարք։ Իտալերենից նա թարգմանել է Պ. Սենիերի «Քարոզք աղուհացիս» գործը։ Այդ մասին Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրերից մեկում նշված է. «Պողոս Բ պատրիարք Պոլսոյ, արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, թարգմանեաց յիտալականէ ի հայ բարբառ...»[42]։

Զմյուռնահայ վաճառականները մինչև 1820-ական թթ. իրենց ազդանվանը ավելացնում էին իտալերենից փոխառած «դի» նախդիրը[43]։ 1794 թ. Մարդար Ասլրոյանի մի վկայագրի մեջ հիշվում են զմյուռնացիներ Կարապետ դի հաճի Հարությունը և Մսեր դի Գրիգորը[44]։ Այդ նախդիրի յուրացմանն ենք հանդիպում նաև Դավիթ կաթողիկոսին (1803) և Ներսես Աշտարակեցուն (1807) հղված զմյուռնահայ վաճառականների դիմումներում[45] և այլն։

Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան արական դպրոցում XIX դարում կայուն տեղ ուներ իտալերենի ուսուցումը։ 1831 թ. այդ դպրոցի տեսուչ Ռ. Ա. Փափազյանը մտցրեց իտալերենի դասավանդումը[46]։ Նրա տեսչության ժամանակ

---

40 «Արշալույս արարատյան», 1846, 3 մայիսի։

41 Ա. Ալպոյաճյան. Զմյուռնիո տպարանները։—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 70։

42 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց. Երուսաղեմ, 1977, էջ 338։

43 «Արևելք», Կ. Պոլիս, 1902, 27 մայիսի։

44 Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 61։

45 Նույն տեղում, թղթ. 14, վավ. 56, թղթ. 18, վավ. 133։

46 Նույն տեղում, թղթ. 89, վավ. 252։ Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1474, 1477, 1479։ «Հառաջ», 1972, 4 հոկտեմբերի։

դպրոցի սաների ուժերով բեմադրվեց Կ. Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին» կատակերգությունը[47]։ Իտալերենի ուսուցում էր իրականացվում նաև 1847 թ. Զմյուռնիայում Մխիթարյանների բացած դպրոցում[48]։ Իտալերենը, ի դեպ, ամուր հիմքեր ուներ նաև Զմյուռնիայի այլ ազգություններին պատկանող դպրոցներում, ինչպես, օրինակ, 1840 թ. հիմնված Ռեֆորձոյի ֆրանսիական հաստատությունում[49]։ 1840 թ. այստեղ հյուրախաղերով հանդես էր գալիս Աթենքից եկած իտալական դերասանական խումբը, որը ներկայացրել էր նաև Ռոսսինիի «Սեվիլյան սափրիչը»[50]։ XIX դարի երկրորդ քառորդից Զմյուռնիայի մշակութային կյանքում հաստատուն տեղ գտավ Քամարանո թատրոնը։ 1870-ական թթ. Զմյուռնիայի Ռոզ փողոցում գործում էր էվտերպե թատրոնը՝ դարձյալ իտալական խմբով[51]։ Իտալական թատրոնը նշանակալի ազդեցություն ունեցավ 1860-ական թթ. զմյուռնահայերի «Վասպուրական» թատրոնի կազմավորման գործում։

Այսպիսով, զմյուռնահայերի առևտրատնտեսական կապերը իտալական առևտրական ու արդյունաբերական կենտրոնների հետ սկզբնավորվել են Զմյուռնիայի հայ գաղթօջախի հիմնադրումից ի վեր, XIV դարից։ Այդ առևտրական հարաբերություններում հայ միջնորդ վաճառականությունը նպաստել է Արևմուտք—Արևելք ապրանքափոխանակության զարգացմանը՝ Լևանտի երկրներում տարածելով իտալական անհամեմատ կատարելագործված առևտրի եղանակները։ XIV—XVIII դդ. հայ վաճառականությունը նշված ապրանքափոխանակության սոսկ երկրորդական մասնակից չի եղել, այլ ակտիվորեն ու դրականապես է ներգործել այդ գործընթացի վրա, որ վկայվում է Վենետիկի, Լիվոռնոյի և իտալական այլ քաղաքների իշխանությունների կողմից հայ վաճառականների հանդեպ ցուցաբերված միանշանակ բարյացակամ վերաբերմունքով՝ ոչ միայն տնտեսական, այլև իրավական, հոգևոր ու բարոյական տեսակետներից։ Իտալացիների հետ զմյուռնահայերի առևտրատնտեսական կապերը խթանել են հայ-իտալական մշակութային հարաբերությունները։

ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИЕ СВЯЗИ СМИРНИЙСКИХ АРМЯН С ГОРОДАМИ ИТАЛИИ (XV—XIX вв.)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Смирнийская армянская колония, сформировавшаяся в XIV в. после падения Киликийского армянского царства и просуществовавшая до 1922 г., имела вековые и разносторонние торгово-экономические связи с городами Италии (Генуя, Венеция, Анкона, Ливорно, Лукка). Армянское купечество Смирны вывозило в Италию сырье, главным образом шелк, шерсть, хлопок, ткани, пряности, драгоценные камни и т. д. Из итальянских городов они ввозили в Турцию, а также в западноевропейские страны промышленные товары, существенно способствуя, тем самым, развитию международного товарооборота. Благодаря своей предприимчивости и таланту, армянское купечество приобрело в левантийской торговле экономический вес и авторитет. Это подтверждается торговыми льготами, предоставленными властями Венеции, Ливорно и других городов армянским купцам. Торгово-экономические связи с итальянцами послужили стимулом для тесных культурных взаимоотношений.

---

47 *Տ. Սավալան. Կենսագրական հուշեր. Կահիրե, 1900, էջ 21։*

48 *«Արշալույս արարատյան», 1847, 7 փետրվարի։*

49 *Նույն տեղում, 1846, 21 սեպտեմբերի։*

50 *Նույն տեղում, 1840, 21 սեպտեմբերի։*

51 Handbook for Travellers in Turkey, in Asia. London, 1872, p. 266.